

nasmata» հրատարակուած 1602-ին Քեփլերէն, որուն առաջին մասին մէջ կը խօսի արեւու և լուսնի շարժումներու մասին և 777 աստղերու դիրքը կու տայ. երկրորդ մասին մէջ կը խօսի 1577-ին երեւցած գիսաւորի մասին, ապացուցանելով թէ ան մոլորակներու շրջանակներու մէջ է որ կը շարժի, ուստի չի կրնար երկրային շոգիացումներէ ձեւացած ըլլալ: Թէեւ նա մեծապէս կը յարգէր Կոպեռնիկոսը՝ սակայն կրօնական գաղափարներէ կաշկանդուած՝ չէր կրնար արեւակեդրոնային դրութիւնը ընդունիլ. այլ իբր տիեզերքի կեդրոն կը դնէր երկիրը՝ անշարժ, որուն շուրջ կը դառնան արեւն ու լուսինը, իսկ արեւուն շուրջ կը դառնան միւս մոլորակները:

Թիքոյ իր միւս գործերուն մէջ կու տայ նկարագրութիւնը գործածած և հնարած աստղաբաշխական գործիքներուն, կը տեղեկացնէ մեզ իր ըրած դիտողութիւններուն և գիտելոյն մասին և իր անձին շուրջ կենսագրական տեղեկութիւններ կու տայ:

Երիտասարդութեան շրջանին կը մշակէր նաեւ աստղագիտութիւնը (այսինքն է աստղերու շարժումներէն ու դիրքէն գուշակութիւններ ընել), սակայն տարիքը առաջ երթալով ըմբռնեց անոր ունայն ու անտրամաբան ըլլալը ու բոլորովին թողուց զայն:

Թիքոյ լուսերական էր, բայց խորապէս հաւատացեալ քրիստոնեայ. իր գրութիւններու մէջ շատ յայտնի կ'երեւի իր հաւատացեալ հոգին. օրինակի համար կը գրէ. «Աստուածային իմաստութիւնը մարդը դրաւ երկրիս վրայ, որպէս զի անկէ՝ իբր դիտարանէ մը դիտէ բնութիւնն ու տիեզերքի կազմութիւնը և այսպէս այս վաղանցիկ կեանքին մէջ կարենայ տեսանել իրերու քննութենէն ճանչնալ մեծութիւնն ու իմաստութիւնը անտեսանելի Աստուծոյ: Ուստի, մարգարէներէն և մեր Փրկչէն մեզի յայտնուած յաւիտենական էակին և անքննելի Աստուծոյ վրայ մտածելէն վերջ՝ ոչինչ այնպէս հարկաւոր ու պատշաճ է մարդուս վախճանին, որուն համար ստեղծուած է ան, ինչպէս շարունակ քննել աստուածային գործերը, որ ամենուրեք կը փայլին աշխարհիս մէջ»:

Թիքոյ ստուգապէս աստղաբաշխութիւնը վերանորոգող գլխաւոր գիտնականներէն մէկը եղած է: Իր դիտողութիւնները, դիտակի գիւտէն առաջ, կարելի եղած մեծագոյն ճշգրտութեան հասած են: Ուստի իրապէս օղակ մը կը կազմէ մեծ աստղաբաշխներու ոսկեղէն շղթային մէջ. Կոպեռնիկոս, Թիքոյ, Քեփլէր, Կալիլէոս, Նեւտոն:

ՅԱ.

Գ Ի Տ Ա Կ Յ Ա Ք Ա Ր

Ես ուզելով ընտրեցի այս ապերախտ, նեղ ճամբան
Եւ իմ ետին ձգեցի ամէն հաճոյք, ամէն բան.
Գիտէի որ կը սպասէր պատիժն՝ ինծի լոկ բաժին՝
Բարեկամի իսկ ձեռքով, ճամբուս կիսուն, վախճանին:

Ես իմ ձեռքով տաշեցի փայտը խաչիս անիրաւ,
Արեւնեցայ ամէն օր, ձայն չհանեցի ես բընաւ.
Յեառ էղայ ողջակէզ գաղափարին համար վեհ,
Արծարծեցի կայծն անշունչ, շուտով դարձաւ ան հրդեհ:

Ֆիլատեֆիա, 7 Յունիս 1944.

ՅԱՅՈՒՆ ԳՈՒԹՈՒՄՅԱՆՆ

ՀԱՅ ԱՐՁԱՆԱԳՈՐԾ

ՏԻԿԻՆ ՆՈՒԱՐԴ ԶԱՐԵԱՆ

Տիկին Նուարդ Զարեան, դուստր յայտնի գրագէտ Կոստան Զարեանի, վերջերս Հռոմի «Accademia di Belle Arti»-ի մէջ կ'ընդունուէր որպէս Ուսուցչուհի քանդակագործութեան. անշուշտ արժանի գնահատանք մը իր տաղանդին, բայց միեւնոյն ժամանակ պատիւ մը նաեւ հայ անուան:

Տիկ. Նուարդ Զարեան, ծնած է Ֆիրենցէ 1917-ին: Մանկութեան տարիներուն շատ ճամբորդած է, գացած է Երեւան և Եւրոպայի զանազան քաղաքները. երկարատեւ մնացած է Փարիզ, որու թանկարանները իրենց արուեստի գանձերով յայտնի հետք մը թողած են անոր մտքին ու երեւակայութեան վրայ: Ուսած է Վենետիկ՝ արուեստի և գեղեցկութեան քաղաքին մէջ, և աւարտած «Liceo artistico» Գեղարուեստից վարժարանը, ուր գտած է իր ճշմարիտ ուղին՝ քանդակագործութիւնը: Անցնելով Հռոմ՝ չորս տարի աշակերտած է փրոֆ. Ծանելլի-ին «Accademia di Belle Arti» Գեղարուեստական բարձրագոյն Հաստատութեան մէջ: Ամուսնացած է Կ. Չիմարայի հետ, որ նմանապէս քանդակագործ մ'է: Տիկին Նուարդ կը պահէ սակայն արուեստագիտուհի իր կեանքին մէջ հօրենական մականունը:

Քանդակագործութիւնը իրեն համար հոգեկան ապրում մըն է կարծէք. նէ տարուած մի միայն արուեստի գաղափարականէն և ներշնչուած իր հոգւոյն հարուստ հայ ըովբէն, արաւորած է շատ կանուխէն այնպիսի գործեր, որոնք արուեստագէտներու սքանչացումին առարկայ եղած են. տեսած են անոնք հոն առնական ուժեղ

նկարագիր մը, ինքնատիպ արտայայտութիւն մը, «բիւզանդական ոգի», «արեւելեան զգայնութիւն», հակառակ որ նէ իր ուսումները ամբողջապէս կատարած է Իտալիոյ մէջ:

Տիկ. Նուարդ Զարեան առիթ ունեցած է մասնակցելու զանազան Յուցահանդէսներու, միշտ արժանանալով գնահատանքի: Իր «Մայրութիւնը», «Եգիպտացին»



Հօրս պատկերը